ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի, 2020 թվականի № 9-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱԶՄՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասին «ժբ» կետի, 92-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 31-րդ հոդվածի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով իրականացնել արտաքին աուդիտ:

2. Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով աուդիտ իրականացնող անձ հաստատել Ընկերության կողմից ՀՀՌ-ԳՀԾՁԲ-20/01 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և ընտրված մասնակից ճանաչված «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված աուդիտն իրականացնելու նպատակով «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ծառայությունների դիմաց վճարման գումարի չափ սահմանել սույն որոշման 2-րդ կետում նշված գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի կողմից առաջարկված գումարի չափը՝ 1,368,000.0 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

4. Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել աուդիտ իրականացնելու մասին պայմանագիր:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

7 փետրվարի, 2020 թվականի

ք. Երևան